
ՈՒՏՈՊԻԱՆ ՈՐՊԵՍ ՍՈՑԻՈՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԵՐԵՎՈՒՅԹ

ՄԵՐԻ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

«Երևակայությունը կարևոր է գիտելիքից», - ասում էր Էյնշտեյնը: Այժմ, երբ աշխարհը զարգանում է սրընթաց՝ սովորական պատկերացումներում մտցնելով խռովքներ, այդ միտքն առավել արդիական է, քան հիսուն տարի առաջ:

Քանի որ մարդը պատմական էակ է, որն ապրում է վերջավոր ժամանակում և գիտակցում է իր ներառվածությունը պատմական ժամանակի մեջ, մասնակցությունն ինչպես անցյալին, այնպես էլ ապագային, այդ պատճառով ապագայի պատկերը նրա անքակտելի պատկանելությունն է:

Ձգտումն իդեալին և լավագույն ապագայի ցանկությունն իրենց ու իրենց հարազատների համար հատուկ է մարդուն, այդ պատճառով ուտոպիաների պահանջարկը պահպանվում է և կպահպանվի բոլոր հասարակություններում: Բայց անհրաժեշտ է հստակ գիտակցել այն սահմանները, որոնցում մարդը կարող է թույլ տալ ուտոպիային գործառել սոցիոնշակութային ստեղծագործության անսահման ազատությամբ:

«Ուտոպիստական» բառն առաջին անգամ ի հայտ է եկել 1516 թ.-ին՝ Թ. Մորի «Ուտոպիա» գրքի տպագրությունից մի փոքր ուշ: Թ. Մորի գրքի խորագիրը ուներ հետևյալ ձևակերպումը. «Ոսկե գիրք, որքան օգտակար, նույնքան էլ զվարճալի. պետության լավագույն կառուցվածքի և նոր կղզի Ուտոպիայի մասին»: Օգտագործված նոր եզրույթում «topos» բառը (հուն.) նշանակում էր տեղ, «U» նախածանցը կարող էր առաջանալ կամ հունարեն «eu», կամ էլ «ou» նախածանցից: Առաջին դեպքում մենք գործ կունենայինք «էվտոպիայի» հետ, որը նշանակում է «լավ տեղ», երկրորդ դեպքում՝ «ուտոպիայի», որը նշանակում է «տեղ, որը չկա»¹: Թ. Մորի ուտոպիան և՛ այդ էր, և՛ այն: Այդ տարիներին հանրահայտ «utopien» հասկացությունը 18-րդ դարի ընթացքում անհետացավ: Գերմաներենում utopia բառը բաժանված էր երկու մասի. առաջինը՝ «utopisch», ունի օբյեկտիվ իմաստ, իսկ մյուսը՝ «utopistisch», նշանակում է ոչնչացնող, և անհնարինի փնտրտուքների հոմանիշն է: Ուտոպիա սկսեցին անվանել այն տեքստերը, որոնք ներշնչված էին Թ. Մորից, և որոնցում, պատմական զարգացումների հետ օբյեկտիվ կապ չունենալով, դրսևորվում է տարածության մեջ որոշ չափով առանձնացած կամ ժամանակից հեռացված իդեալական հասարակությունը: Կամպանելլայի «Արևի քաղաքը», Բեկոնի «Նոր Ատլանտիդան», Յարինգտոնի «Օկեանիան» և շատ այլ ստեղծագործություններ ամրապնդեցին այդ ժանրի հաջողությունը, իսկ նրա տարատեսակություններն այժմ տպավորիչ ցուցակ են կազմում: Միևնույն ժամանակ, ուտոպիա սկսեցին անվանել նաև ավելի վաղ գրված ստեղծագործությունները,

¹ Տե՛ս **Шацкий Е.** Утопия и традиция. М., 1990, էջ 16:

ինչպիսին է Պլատոնի «Պետությունը», ինչի շնորհիվ այդ գործը դարձավ Եվրոպայի առաջին ուտոպիան:

Հասարակության ուտոպիստական մոդելները խիստ տարատեսակ են: Ուտոպիայի խնդրին նվիրված գրականության մեջ կան սոցիալական ուտոպիաների տարբեր դասակարգումներ: Ելնելով բանականության և երևակայության, հասարակական ինքնավարության և բռնապետության, բնական զարգացման և նախագծման հակադրությունից՝ ուտոպիաները կարելի է բաժանել երկու խմբի՝ կարգի և ազատության ուտոպիաներ: Այդպիսի բաժանումը բխում է այդ ժանրի հիմնադիրներ Թ. Մորի և Թ. Կամպանելլայի գրքերից: Մորի գիրքն ազատության ուտոպիայի սկզբնաղբյուրն է, իսկ Կամպանելլայի «Արևի քաղաքը» ծնեց կարգի ուտոպիան: Ժանրի շրջանակներում ձևավորվեցին երկու հակադիր միտումներ՝ «մարդու իդեալական վիճակը» վերակերտող ուտոպիաներ (դրանք սկիզբ են առնում ժողովրդական և հեղափոխական ավանդույթներից) և «պետության իդեալական քաղաքացուն» նկարագրող ուտոպիաներ: Ե. Շացկին տիպաբանում է ուտոպիաները որպես էսկապիստական, որի մեջ մտնում են տեղի, ժամանակի, վերժամանակային կարգի ուտոպիաները, և հերոսական՝ քաղաքականության և կարգի ուտոպիաները²: Մարքսիստական գրականության մեջ ուտոպիաները բաժանվում են ըստ սոցիալական պարունակության՝ ստրկատիրական, ֆեոդալական-աստվածապետական, բուրժուական, մանրբուրժուական և այլն: Շատ փիլիսոփաներ և գրականագետներ տարբերակում են տեխնածին, այսինքն՝ այնպիսի ուտոպիաներ, որտեղ սոցիալական պրոբլեմները որոշվում են գիտատեխնիկական առաջընթացի ուղիով, և սոցիալական ուտոպիաներ, որոնք մարդկանց հնարավորություն են ընձեռում փոփոխելու սեփական հասարակությունը:

Տարբերակում են նաև փախուստի և վերակառուցման ուտոպիաներ³: Առաջինները հաստատում են փախուստն իրականությունից և այլ տեղում երազանքի երկրի ստեղծումը, երկրորդները, առաջարկելով ինչ-որ այլընտրանք, քաղաքական և սոցիալական քննադատության են ենթարկում աշխարհի զոյություն ունեցող մոդելը: Փախուստի ուտոպիաներն այն չափով, որքանով նրանք թույլ են տալիս ձեռք բերել լավագույն կյանք այլ երկրամասերում, կարող են ունենալ տնտեսական և սոցիալական դրական տեսանկյուններ: Բայց նաև հարց է առաջանում. արդյո՞ք բոլոր ուտոպիաներում կան փախուստի և վերկառուցման տարրեր: Չէ՞ որ փախուստն ու վերակառուցումն իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունքի և այն վերափոխելու հետևանք են, ավանդական տնտեսական ձևերից դժգոհության և նորը ստեղծելու ձգտման դրսևորում:

Այս և այլ տիպաբանությունների հիմքում ընկած են դասակարգման և գնահատման տարբեր բնութագրիչներ: Օրինակ՝ Չալիկովան նշում է, որ ուտոպիայի սահմանումը փոփոխական է և կախված է ինչպես սոցիալական մտածողության տիպերի զարգացումից, այնպես էլ հասարակության մեջ նրա ունեցած դերից⁴: Այս իրավիճակի պատճառ է ուտոպիայի էու-

² Տե՛ս նույն տեղը, էջ 65:

³ Տե՛ս **Аинса Ф.** Реконструкция утопии. М., 1999, էջ 55:

⁴ Տե՛ս **Чаликова В.** Предисловие // Утопия и утопическое мышление: Антология зарубежной литературы. М., 1991, էջ 8:

թանճն ու սոցիալական նշանակությանը վերաբերող շատ հարցերի վիճելի լինելը: Օրինակ՝ բաց են մնում ուտոպիայի և ամբողջատիրական կարգերի հարաբերակցությանը, ուտոպիստական սոցիալական մոդելների իրականացման հնարավորությանը, ուտոպիստական մտածողության բնույթին ու աղբյուրներին վերաբերող բազմաթիվ հարցեր:

Քանի որ որոշակի տարածության գաղափարը կարևոր տեղ է գրավում ուտոպիաների մեծ մասում, նպատակահարմար է մանրամասն անդրադառնալ նրա կատարած դերին և գործառույթներին: Ուտոպիայի տեղայնացումը ժամանակի կամ տարածության մեջ ենթադրում է որակապես այլ իրականության ստեղծում: Այլ՝ այլընտրանքային աշխարհն իրականության քննադատական հակապատկերն է՝ տրված «այստեղ և հիմա», որն ուտոպիան ձգտում է փոխել, որպեսզի շտկի նրա անարդար կառուցվածքը: Ուրեմն, ուտոպիան միշտ դուալիստական է այնքանով, որքանով որ ստեղծում և ներկայացնում է գոյություն ունեցող, անցյալում եղած կամ ապագայում հնարավոր այլ իրականության հակապատկեր: Ուտոպիայում, սակայն, հակադրությունը դուրս չի գալիս «այստեղի աշխարհից», ուրիշ ժամանակը գոյություն ունի պատմական ժամանակի ներսում, իսկ այլ տարածությունը՝ աշխարհագրական տարածության մեջ: Այդ պատճառով ուտոպիայի ուսումնասիրության համար շատ կարևոր նշանակություն ունեն «ժամանակ և տարածություն» հասկացությունները: Այն, սովորաբար, միշտ ուղղված է դեպի ապագան կամ անցյալը: Անցյալը, որպես կանոն, նույնացվում է ոսկե դարի կամ կորած դրախտի մասին առասպելների հետ: Այդ առասպելների հետքերը կան բոլոր կրոններում և մշակույթներում: Դիմելով անցյալին՝ փիլիսոփաներն ու պոետներն «իդեալական ժամանակի» պատկերին տալիս են քաղցր վերհուշի երանգավորում: Կորցրած ժամանակն ուտոպիայի համար ունի բնութագրիչ գծեր. չիմանալով ո՛չ հանցագործություններ, ո՛չ օրենքներ, ո՛չ պատերազմ՝ մարդիկ ապրում են լիառատ երկրում երջանիկ և ապահով:

Ցանկացած հասարակություն կարելի է բնութագրել տարածական եզրույթներով, այնպիսիք՝ ինչպիսիք են տարածականությունը, բացվածությունը, փակվածությունը, կապվածությունն արտաքին աշխարհի հետ կամ մեկուսացվածությունը: Տարածությունը երբեք չի լինում չեզոք կամ երկրորդական, ինչը նշանակում է, որ շրջապատող միջավայրի հետ մարդու հարաբերությունները դրսևորվում են բնության և մշակույթի, անհատի և հասարակության միջև բազմաթիվ բաղադրիչների համապատասխանության և արձագանքների նուրբ խաղի միջոցով: Այդ հարաբերությունները կարող են լինել ներդաշնակ կամ աններդաշնակ: Աշխարհիկ դրախտ, ոսկեդար և «երջանիկ տարածության» այլ տիպեր, որոնք ստեղծվել են մշակույթի պատմության ընթացքում, ենթադրում են լրիվ ներդաշնակություն մարդու և բնության միջև: Ուտոպիան և նրան սնուցող առասպելները՝ Ավետյաց երկիրը, իդեալական երկիրը կամ դրախտն աղքատների համար, կարող են ի հայտ գալ միայն իրական տարածությունը, որտեղ մարդն իրեն զգում է օտարացած, խմբային երևակայության վայրերից (տոպոսներից) կառուցված ցանկալի տարածությանը հակադրելու հետևանքով: Իդեալական տարածության գոյության երաշխիքը նրա հեռացվածությունն

է. այդ լիրիկական տարածական կոորդինատն արտահայտվում է «այնտեղ» հասկացությամբ, ինչպես նաև կղզու պատկերով կամ արտաքին աշխարհից կտրված, հեռու և անհասանելի վայրերով⁵: Ուտոպիստական տարածության այլատեսակությունն անհրաժեշտաբար դրդում է այլընտրանքի փնտրտուքներով իրականությունից փախուստի և նրա սահմանների հաղթահարմանը: Ահա թե ինչու աշխարհագրական ուտոպիաները սերտորեն կապված են աշխարհագրական բացահայտումների հետ: Իրական տարածությունն իդեալականից առանձնացված է սահմաններով. այն խորհրդանշում է մի աշխարհի վերջնակետը և մյուսի սկիզբը: Միաժամանակ ընդգծելով որոշակի տարածություն իր բնութագրիչ առանձնահատկություններով և երևույթներով՝ սահմանը մարմնավորում է սահմանային վիճակներ, լարվածության շրջան: Սահմանային տարածությունն իրենից ներկայացնում է «ցանկացած ազգի համար գերզգացմունքային գոտի»: Սահմանի պարագծից այն կողմ ընկած «այլ» տարածությունը հարազատ տարածության հակապատկերն է: Սահմանն ուտոպիային անհրաժեշտ է, որպեսզի առանձնացնի իր տարածությունն իրականից, բայց, դրանով հանդերձ, ուտոպիան խուսափում է սահմաններից, քանի որ այն տարածայնությունների տարածք է, վեճերի ու շահերի բախումների առաջացման վայր:

Մեկուսացվածությունը թույլ է տալիս ուտոպիային խուսափել «ուրիշ» աշխարհի կործանարար ազդեցությունից և բացառում է սահմանից դուրս շփումները: Դրանով են պայմանավորված ուտոպիայի տարածքային արքեոտիպերը՝ կղզի, Ավետյաց երկիր, հեռավոր ու անհասանելի տարածքներ: Բոլոր դեպքերում մեկուսացվածությունը պետք է երաշխավորի առաջարկված մոդելի անձեռնմխելիությունը և կասեցնի կախումն այլ տարածությունից կամ ազդեցությունից:

Ուտոպիաները, ի տարբերություն գաղափարախոսության, իրենց տեսական հիմքի ուժով պահանջում են որոշակի աշխարհագրական տարածք, որտեղ կարող էր գտնվել այլ տեղը՝ հեռու այլատեսակ աշխարհներից, հնարավորի սահմաններում «այստեղ և հիմայից» առանձնացված:

Արդեն հեռավոր այլ տեղում գոյություն ունեցող ուտոպիան ավելի գայթակղիչ է թվում, քան սեփական երկրի բարձրերն ու ավանդույթներն արմատապես փոխելու վտանգավոր փորձերը:

Իրական տեղի (տոպոսի) և երևակայական ուտոպիայի միջև տեղի է ունենում դիալեկտիկական փոխազդեցություն: Ուտոպիան չի սահմանափակվում հնարավոր աշխարհի հորինված կառուցվածքով, այն նաև ժամանակակից իրականության հասկացման և վերլուծման միջոց է: Հենց այդ իրականի և իդեալականի հակասական երկակիությունը թույլ է տալիս խոսելու ուտոպիական ուղղվածության մասին, այսինքն՝ ուտոպիային հատուկ ներկայի պատկերների և հնարավոր ապագայի պատկերի միախառնման միտումների մասին: Ըստ այդմ՝ կարելի է պնդել, որ սահմանը, որից այն կողմ սկսվում է «ուտոպիստականը», դնում է ոչ թե ռեալ իրականությունը, այլ վերջնարդյունքում պատմական զարգացումը սնող ուտոպիստական լարվածությունը:

⁵ Տե՛ս **Аннса Ф.**, նշվ. աշխ., էջ 50:

Ուտոպիայի հեղինակներն իրենց դարաշրջանի ոգու արտահայտություններն են, կախված են նրանից և ստեղծում են իրենց հասարակության համոզմունքները, հույսերն ու հակասությունները: Այն փաստը, որ ուտոպիան հասարակությանն առաջարկում է ապագայի նախագծեր, դեռ չի նշանակում, որ այն պետք է դուրս գա պատմության շրջանակներից ու հերքի այն: **Ջ. Ղևիսի** պատկերավոր ներկայացնամբ. «Ուտոպիան գործնականում պատմություն չունի: Պատմության նկատմամբ ուտոպիան նման է միշտ նույն երթուղով ընթացող գնացքի. տարբեր ուղևորներ մեկնում և վերադառնում են, բայց նրա ուղին մնում է անփոփոխ»⁶: Կարելի է ասել, որ իսկապես՝ ուտոպիան պատմություն չունի, բայց այն առաջ է մղում պատմությունը՝ տալով նրան բացատրություններ և նրա իրադարձություններին՝ արքետիպային, տեսական ու գաղափարախոսական հիմքեր ինչպես սոցիալական կարգի փոփոխման, այնպես էլ նրա պահպանման համար: Ցանկացած ուտոպիստական մոդել կոնկրետ սոցիալ-պատմական, ազգային և մշակութային պայմանների պտուղ է: Ունենալով արքետիպային հիմքեր՝ ուտոպիան, ինչպես ազգային մշակույթի մյուս երևույթները, մարդուն հաղորդակից է դարձնում համընդհանուր աշխարհընկալմանը՝ միավորելով բնության, Հասարակության և Տիեզերքի աշխարհակարգի օրենքների ըմբռնումները⁷:

Ուտոպիան՝ որպես մշակույթի անհրաժեշտ տարր, արտացոլում է սոցիալական իրականության որոշ կողմեր, ինչպես նաև մասնակցում է այդ սոցիալական իրականության ձևավորմանը և զարգացմանը: Բոլոր ուտոպիստական մոդելները պարունակում են տվյալ ժամանակների հասարակական-քաղաքական համակարգի գծեր, որոնք, սակայն, ուտոպիայում այնպես են վերափոխվում, որ բացասական կողմերը հնարավորինս դուրս են մղվում, իսկ դրականները հասցվում են բացարձակի և սկսում են գերակշռել: Իդեալի տեսական մոդելավորումն առաջանում է առավել կատարյալ հասարակական վիճակի ձգտումից:

Ցանկացած հասարակական արձատական փոփոխություն անխուսափելիորեն հանգեցնում է հին ուտոպիաների անկման և նրանց վերածննդն այլ գաղափարական ձևերով, որոնք, իրենց հերթին, երբ հին սոցիալական կարգը դադարում է բավարարել ժամանակակիցներին, վերափոխվում են նոր ուտոպիաների⁸: Ինչպես նշում է Ե. Շացկին. «Դերասանները գալիս և գնում են, բայց բեմադրությունը շարունակվում է: Ինչպես երևում է, ուտոպիաների ստեղծումը մարդու ինչ որ կայուն պահանջմունքի պատասխանն է»⁹:

Ուտոպիան հատուկ դեր է կատարում սոցիալական ինքնակարգավորման մեջ: Ուտոպիայի միջոցով հասարակությունը գիտակցում, իմաստավորում է իր անցումային, ճգնաժամային վիճակը և որոշում է դեպի ներդաշնակ, իդեալական աշխարհակարգի տանող ուղին: Սոցիալական

⁶ **Полетаев А. В., Савельева И. М.** Циклы Кондратьева и развитие капитализма. М., 1994, с. 104.

⁷ Տե՛ս **Василькова В. В.** Порядок и хаос в развитии социальных систем: Синергетика и теория социальной самоорганизации. М., 1999, էջ 457:

⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 412:

⁹ **Шацкий Е.**, նշվ. աշխ., էջ 45:

զարգացումն այդ համատեքստում իդեալական սոցիալական կարգին մոտենալու և հեռանալու փուլերի հերթափոխն է: Հենց ուտոպիաների առաջացումը և ուտոպիստական տրամադրությունների աշխուժացումը սոցիալական ու հոգևոր այդպիսի ճգնաժամերի որոշարկիչներ են: Այդ տեսանկյունից ուտոպիան տարբեր պատմական այլընտրանքներում սոցիալական առաջընթացի պարտադիր փուլ է: Եվ քանի որ ուտոպիստականի կոնկրետ սահմանումը միշտ կապված է կեցության զարգացման որոշակի փուլի հետ, այսօրվա ուտոպիաները կարող են դառնալ վաղվա իրականությունը, ինչը նշանակում է, որ ուտոպիաները յուրատեսակ վաղաժամ ճշմարտություններ են¹⁰:

Ուտոպիան միշտ ձգտում է դուրս գալ իրեն ժամանակակից իրականության սահմաններից, այլ տարածության և ժամանակի մեջ նախագծում է սոցիալական աշխարհի պատկերներ, որոնք երևակայականորեն կամ իրականում հիմնված են գնահատվող հասարակությունից տարբերվող այլ սկզբունքների վրա:

Ուտոպիստական են համարվում բոլոր այն նախագծերը, որոնք կողմնորոշված են մարդու սոցիալական աշխարհի և հենց մարդու վերափոխմանը, որը ենթադրում է արժեքների և կենսակերպի էական փոփոխություններ: Կարելի է ասել, որ ուտոպիան նախագիծ է, որը մասնակիորեն կամ ամբողջապես ուղղված է ապագայում պրակտիկ իրականացմանը, կամ մոդել է՝ առանց պրակտիկ իրականացման հաշվարկի, որը ներառում է իդեալականի, նախագծի կամ մոդելի հեղինակի, մարդու և նրա աշխարհի պատկերը: «Սոցիալական աշխարհում շարժում տեղի է ունենում միշտ այն բանի շնորհիվ, որ իրերի տրված կարգի մեջ հորինվում են այդ իրերի իդեալական արտացոլումները, այն գաղափարները, թե նրանք ինչպիսին պետք է լինեին»¹¹:

Մարդուն հատուկ է սեփական կեցության սահմաններից դուրս գալու ձգտումը: Գիտակցության նախագծած աշխարհը վերջին հաշվով կառուցվում է ոչ թե գոյություն ունեցողով, այլ «պիտոյականով», մարդու համար ամենակարևոր արժեքներով: Ուտոպիայի առաջնահերթ ուղղվածությունը «պիտոյականին», մարդու «երջանիկ», «սոցիալապես ապահով» գոյությամբ, այն դարձնում է հումանիստական ստեղծագործություն: Իրականության քննադատությունն անհրաժեշտ գործառույթ է, բայց այն ուտոպիայի վերջնական նպատակը չէ, այլ նրա հիմնական և առաջնային գործառույթի իրագործման միջոցն է: Ուտոպիստական նախագծի համար կարևոր է ստեղծել մարդու և նրա աշխարհի սկզբունքորեն նոր արժեքային համակարգով ուղղորդիչ պատկեր, նպաստել դրանց ձևավորմանը և հաստատմանը ներկայում: Հետևաբար՝ ուտոպիայի խնդիրն է դառնում նոր մարդու և նրա աշխարհի արարումը:

Ուտոպիան՝ որպես սոցիոմշակութային երևույթ, ունի խիստ հակասական բնույթ: Այն ոչ միայն քննադատում է տվյալ ժամանակների իրականությունը, այլև հաստատում է որոշակի իդեալ, որում հաղթահարվում են առկա հասարակական կարգի բացասական դրսևորումները: Այդ իմաստ-

¹⁰ Տե՛ս **Мангейм К.** Идеология и утопия. М., 1994, էջ 173:

¹¹ Նույն տեղում, էջ 170:

տով ուտոպիան իր էությանը ոչ միայն բանական է, այլև հաճախ ունենում է արտահայտման գրական-իռացիոնալ ձև: Նաև պետք է նշել, որ ուտոպիստական տեսությունները, որքան էլ բանականացված լինեն, այնուամենայնիվ միշտ կապված են գալիք սոցիալական կարգին հասնելու այս կամ այն կրոնական, սրբազանացված ձևերի հետ:

Ուտոպիան հասարակական պատկերացումների տեսակ է, ինչը հաստատում է ուտոպիստական գիտակցության փաստական և արդյունավետ ազդեցությունը սոցիոմշակութային պրակտիկայի վրա: Ձանգվածային գիտակցության կողմից յուրացվելով՝ այն հասարակության մեջ դառնում է իրական ուժ և վերածվում է մարդկանց գործնական մտադրության ու սոցիալական վարքի: Իր բազմանշանակությամբ և հակասականությամբ՝ ուտոպիան մարդու համար բացում է հոգևոր փնտրտուքների նոր հնարավորություններ: Պատմական հեռանկարը «լուսավորելու», արդիական սոցիոմշակութային իդեալ ուրվագծելու, հասարակության իրական վիճակի և հնարավոր զարգացման գնահատման չափանիշներ մշակելու ուտոպիստական գիտակցության ունակությունը կանխորոշում է նրա տեղն ու դերը հասարակական վերափոխումների պրակտիկայում: Ուտոպիստական գիտակցությունը մի կողմից պայմանավորված է այն պատմական ու սոցիոմշակութային գործընթացներով և պայմաններով, որոնց համատեքստում գոյություն ունի և զարգանում է, մյուս կողմից՝ այն բնութագրվում է հասարակության պրակտիկ մտատրամադրության վրա ակտիվ գործունեական ազդեցությամբ՝ մարդկանց դրդելով սոցիալապես նշանակալի վարքի, ինչը օբյեկտիվ պատմական գործընթացների հետ համընկնող դեպքում ուտոպիստական պատկերացումները դարձնում է սոցիոմշակութային փոխակերպման մեխանիզմի կարևոր տարր: Ուտոպիստական գիտակցության դրսևորման բազմատեսակ ձևերը և տարատեսակները ժամանակակից աշխարհում ակնառու են դարձնում այն փաստը, որ ուտոպիան ոչ միայն գոյություն ունի մշտապես, այլև մարդկության պատմական գոյության և սոցիոմշակութային զարգացման անհրաժեշտ գործոն է:

Հասարակության մեջ տեղի ունեցող մասնատումը, որը որոշ հեղինակների համար դարձել է «ուտոպիայի վերջի» ապացույցը, վկայում է, որ որոշ ուտոպիստական մոդելներ ճգնաժամ են ապրում: Բայց կյանքը ցույց է տալիս, որ մեռնող ուտոպիաների մոխիրներից հառնում են ուրիշ մոդելներ, նորից ու նորից առաջանում են արդարության, հավասարության, բարեկեցության, ազատության բարիքներով մարդուն ապահովելու հնարավորություն ունեցող հասարակության մասին դարավոր երազանքները:

Ուտոպիան հնարավոր է նաև մշակույթի, տնտեսության և հասարակական ու առարկայական գործունեության մյուս ձևերում: Բայց առավել ամուր կապ գոյություն ունի ուտոպիայի և քաղաքականության միջև¹²:

Արդիականությունն իր տեսանկյուններն է մտցնում ուտոպիայի մեջ՝ որպես մարդկանց զանգվածային գործողությունների խթանի ուսումնասիրության և յուրացման գործոնի: Մասնավորապես, ավելի ու ավելի մեծ ուշադրություն է դարձվում հասարակական գիտակցության մեջ ուտոպիս-

¹² Տե՛ս Асабина Т. Ю. Утопия в исторической перспективе // Труды Белор. гос. тех. ун-та. Сер. V., Вып. XVII, Минск, 2009, էջ 104:

տական պատկերացումների տարածման մեխանիզմներին՝ օգտագործելով հաղորդակցման տարբեր միջոցներ: Այդպիսի հիմնախնդիր կարող է համարվել զանգվածային գիտակցությունը մանիպուլյացիայի ենթարկելու համար լրատվական միջոցների օգտագործումը, որը դառնում է առավել արդիական այնքանով, որքանով հասարակությունն սկսում է գիտակցել, որ դա փաստական և բավականին արդյունավետ գործիք է հասարակական կյանքը ղեկավարելու համար:

Ուտոպիստական մտքի պատկերավոր ձևի արտահայտությունը թույլ է տալիս իրականացնելու հոգևոր փորձեր, որոնք, վերջին հաշվով, լրջորեն ազդում են հասարակության սոցիալական կողմնորոշման վրա, ինչպես նաև օգնում են զանգվածային գիտակցությամբ ուտոպիայի առավել հեշտ ըմբռնմանը: Ուտոպիան դառնում է «պիտոյականի», ավելի արդարացի և ազնիվ աշխարհի պատկերը: Միայն ուտոպիան կարող է մարդուն տալ երազանքի իրականացման մոտիկության այնպիսի զգացողություն, երբ թվում է, որ այդ երազանքների հասարակությունը գտնվում է շատ մոտ:

Ուտոպիական հայեցակետերը վախի և հույսի բյուրեղացման շնորհիվ մեծ դեր են կատարում կոլեկտիվ գիտակցության ոլորտում: Ուտոպիայի գլխավոր խնդիրը դառնում է կեցության օրգանական միասնականության վերականգնումը, մարդու միասնությունը և միավորումը շրջապատող աշխարհին:

Ուտոպիան և՛ մարդկության լավագույն մշակութային աշխարհակարգի երազանքն է, և՛ գոյություն ունեցող հասարակության քննադատությունն է. այն ուղեկցում է քաղաքակրթությանը հին ժամանակներից ու դրսևորվում է տարբեր ձևերով՝ «Ոսկեդարի» մասին հնագույն հերոսապատումներից մինչև 21-րդ դարի ուտոպիստական հայեցակարգերը: Բայց, ինչպիսի տեսք էլ որ այն ընդունի՝ գրական ստեղծագործության, հասարակության վերակառուցման նախագծի, ազգային առասպելների, հեքիաթների և հերոսապատումների, այդ ամենը մարդու բնությանը հատուկ ուտոպիստական գիտակցության դրսևորումներ են, որոնք գոյություն ունեն երազանքի, լավագույն ճակատագրի տեսքով՝ միաժամանակ պարունակելով իրականության նկատմամբ քննադատական վերաբերմունքի տարրեր: Քաղաքական, սոցիալական, տեխնիկական կամ երկրային դրախտը նկարագրող աշխարհագրական ուտոպիաներն ինքնին վկայում են մարդկության երազանքների ու ձգտումների մասին: Ուտոպիայի ժանրը կարևոր է այն չափով, որքանով այն ստեղծում է մարդկային հասարակության մոդել, արքեստիպ, «լավագույն աշխարհի ինքնատիպ ծրագիր»: Այդ և նման այլ ժանրերի բոլոր ստեղծագործությունները ստեղծում են «հույսերի մեծ հանրագիտարան», «մեր ցանկությունների հայելին»:

Որպես կանոն՝ ուտոպիան գերազանցում է իր ժամանակը: Ժամանակակիցներին թվում է, որ դրանք պատրանքներ են, բայց հենց նրանցում են առաջին անգամ դրվել սեռերի հավասարության, ապահովագրական բժշկության, խառը ուսուցման, աշխատաժամանակի կրճատման հարցերը, ձևակերպվել ազատ ժամանակի գաղափարը:

МЕРИ МИКАЕЛЯН – Утопия как социокультурное явление. – Утопия весьма противоречива. Она включает в себя лучшие мечты и надежды человечества, создаёт идеал общества, отвергает отрицательные стороны того или иного общественного строя. В статье представлены разные категории утопии. Особое внимание уделяется категории места, поскольку для утопии чрезвычайно важны пространство и время, а также граница между реальным и идеальным пространством. Поскольку каждая утопическая модель – это плод социально-исторических, национальных и культурных условий данного времени, в статье рассматривается возможное влияние утопии на прогресс общества, на образование и развитие конкретной социальной реальности. Сегодня утопиями искусно пользуются как инструментом, усиливающим политическое влияние. Опираясь на массовое сознание, утопия воздействует на социальное поведение индивидуума.

MERI MIKAYELYAN – Utopia as a Social-Cultural Phenomenon. – Utopia is of very contradictory nature. It includes the best human dreams and wishes. Utopia depicts a certain social ideal, where all negative aspects of the given social order are excluded. The article presents various categories of utopia. Special attention is paid to "place" utopia, as space and time play an important role in it. The borderline between the real and ideal space is also important. As each utopian model is the result of social-historical, national and cultural conditions of the given time, an attempt is made to show the possible influence of utopia on social progress, on formation and development of the given social reality. At present utopia is creatively used as a tool for increasing and extending political influence. Based on mass consciousness, it influences individual behavior.